

ԳԱՆՉԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ  
ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈԱՌԻ ԹՅԱՆԻ ՔԱՐՏԵԶԻ (1691 թ.)<sup>\*</sup>

ԳԱՅՐԻԵԼԱ ՈՒՆՈՒՀՈՑՑԱՆ (Խոսակիա)

Վերջերս մեր հրատարակած «Հայաստանի հնագույն քարտեզը» վանքերը և սրբավայրերը լից XVII դարերում խորագիրը կրող գրքի՝ առաջարանում դրել ենք «ընթացքի մեջ գտնվող մի աշխատության» մասին, քանզի թեև ինդրու առարկա փաստաթղթի բնագիրն այնտեղ ամբողջությամբ ապագրվել էր՝ դրա տվյալների ուսումնասիրությունը հեռու էր կատարյալ լինելուց։ Այժմ մեր ուշագրությունը կենտրոնացնենք փաստաթղթի միայն այն մասի վրա, որը վերաբերում է Գանձասարի կաթողիկոսությանը՝ ըստ հեղինակի Երեմիա Քյոմուրճյանի։

Սակայն նախասկիս հարկ է մի քանի իսոսք ասել այս բավական կարեոր և ինքնապահ գործի մասին ընդհանուր առմամբ։ Հայ եկեղեցու մեծ քարտեզը (358սմ/120սմ), որը հայտնաբերվել է մի քանի աարի առաջ Բոլոնիայի համալսարանի գրադարանում, կազմվել է 1691 թ. Կոստանդնուպոլսում այդ գարաշրջանում հայ համայնքի նշանագոր ներկայացուցիչ Երեմիա Զելեպիի կողմից։ Դրա պատվիրատուն կոմս Լյուդովիկո Ֆերնանդո Մարսիլին էր, մի իսակացի Բոլոնիայից, որը գիտությունների, ուղմական արվեստի, աշխարհագրության, օվկիանոսագիտության, քաղաքականության և այլ բնագավառներում ծագալած իր գործունեությամբ, ինչպես նաև արկածախնդրական ոգով շատ հայանի էր թե՛ իր գարաշրջանում, թե՛ հետապայում։ 1680 թ. և 1690-1691 թթ. նա երկու անգամ գնացել է Կոստանդնուպոլիս։ Երկրորդ անգամ՝ Ավստրիայի կայսրի կողմից հանձնարարություն ունենալով Բալկանյան պատերազմներից անմիջապես հետո Օսմանյան Դուռն հետ հաշտության բանակցություններ սկսելու վերաբերյալ։

Գրչով գծագրված և ջրաներկով գունագարդված քարտեզն ամփոփում է վանքերի, ուխտատեղերի և հայ եկեղեցու սրբավայրերի գոյության մասին վկայող շուրջ ութ հարյուր հայերեն գրառումներ, որոնք գասակարգված են ըստ իրենց պատկանելության՝ XVII դ. գոյություն ունեցող չորս կաթողիկոսություններից (Էջմիածնի, Ախթամարի, Սսի և Գանձասարի) յուրաքանչյուրին։ Ինչպես հեղինակն ինքն է այդ հորցը պարզաբանելու համար մեծ հաստատակամություն գրսերում հիշատակարանում, որը փաստաթղթի մեկնաբանության համար բովանդակում է (մենք այդ կտես-

\* Հագվածն իբրև զեկուցում ներկայացվել է «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» գիտաժողովին, որը կազմակերպել էր Սանկա Պետրուրդի համալսարանը 2001 թ. հունիսի 27-30-ին։

† G. U I u h o g i a n. Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo. Ravenna, 2000.

նենք) այլ կարևոր բացարություններ ես, յուրաքանչյուր կաթողիկոսություն եզերելու համար նա օդագործում է զանազան գույներ. օրինակ գեղինը՝ Գանձասարի կաթողիկոսության համար, որը նա տեղադրում է ձախ կողմից վերեկ մասում, հենց դեպի Հյուսիս-արեկելք, եթե նկատի ունենանք, որ գեռես միջնադարյան քարտեղադիտության իմացական մակարդակն արտացոլող քարտեղի վրա նշումներն արված են անկաշկանդ ձևով տեղադրելով արեկելքը վերեռում, իսկ արևմուտքը՝ ներքելում: Կաթողիկոսության իրավասության շրջանակները սահմանագատող պարագծից ներս՝ յուրաքանչյուր սրբավայրի տեղանուն ես գեղին գույնով է եղերված:

Նախքան քարտեղի տրամադրած աշխարհագրական, պատմական և վարքագրական բոլոր տարրերի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելը՝ հարկ է կատարել նախնական մի քանի դիտարկումներ: Այն, ինչ մենք ասելու ենք, բառի բուն իմաստով առնչվում է քննարկվող կաթողիկոսությանը, սակայն կարող է կիրառելի լինել ամբողջ գործի համար ընդհանրապես: Ժամանակագրական առումով քարտեղը տեղադրվում է արձանագրությունների՝ և հիշատակարանների՝ միջոցով ներկայացված՝ իրեն նախորդող սկզբնաղբյուրներից և հնագույն պատմիչներ Մովսես Կաղանդատվացու, Վարդան Արեկելցու ու Կիրակոս Գանձակեցու պատումներից հետո, որոնցից հաճախ առատորեն տեղեկություններ է քաղում: Սակայն այդ սկզբնաղբյուրներից առաջ անցնելով երկուսից երեք դարով, քարտեղն իր հերթին դառնում է սկզբնաղբյուր և թույլատրում հետաքրքիր վերահսկողություն սահմանել պատմագիտական այնպիսի աշխատությունների տվյալների նկատմամբ, ինչպիսիք են Մակար Բարխուդարյանցի<sup>4</sup> կամ Բագրատ Ռւլուբարյանի<sup>5</sup> և բազում այլոց աշխատությունները, որոնք հետաքրքիր են այս տարածաշրջանի նյութական ու մշակութային հուշարձանների որոշ մասնավոր կողմերով<sup>6</sup>: Քարտեղը թեև իրեւ սկզբնաղբյուր չի բացահայտում անծանոթ աշխարհ, այն, այդուհանդերձ, թույլատրում է «ստուգել», թե XVII դ. պատմական Հայաստանի սահմաններից դուրս բնակվող լուսափորյալ հայն ինչ գիտեր և ինչ էր ցանկանում տեղեկացնել օտարերկրացուն (չմոռանանք, որ պատվիրատուն իտալացի էր) իր ժողովրդի և նրա հինավուրց ու ժամանակակից մշակույթի մասին: Իր տրամադրության տակ գտնվող տեղեկությունների շրջանակում նա ընտրություն է կատարում և դա վերլուծելով է, որ մենք կարող ենք ըմբռնել այս փաստաթղթի կարեորագույն նշանակությունը, որն ազդարարում է

2 Հմմա. Դիվան Հայ վիմագրության. պրակ 1. Երևան, 1966:

3 Հմմա. Հիշատակարանների շարքը, որոնք հրապարակվել են այնպիսի ժողովածուներում, ինչպիսիք են՝ ժԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950; Ն ու յ ն ի ժԵ դԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Հ. Ա-Գ. Երևան, 1955-1967: Գ ա բ ե գ ի ն Ա կ ա թ ո ղ ի -կ ո ս. Յիշատակարանք ձեռագրաց. Հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.). Անթիլիաս, 1951: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժԴ դար, աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի Երևան, 1984:

4 Մ. Բ. ա ր ի ո ւ գ ա ր ե ա ն ց. Աղուանք երկիր եւ գրացիք. Թիֆլիս, 1893: Ն ու յ ն ի Արցախ. Բագու, 1895: Երկու աշխատություններ միասին վերահսկատակել է և մատենագիտական նոր ցանկերով օժտել Պավել Չորանյան (Երևան, 1999):

5 Բ. Ու լ ո ւ բ ա բ յ ա ն. Խաչենի իշխանությունը Հ-ԽVII դարերում. Երևան, 1975:

6 Հմմա. Պ. Զորանյանի հիշատակած հարուստ մատենագիտությունը Մ. Բարխոստարյանցի գրքերի վերահսկատարակության ծանոթագրություններում (էջ 10-14):

Հարսդ միջնադարի ավարար և ամրագրում հայկական ինքնության փոփոխություններ կրած գիտակցության ծնունդը:

Այս քարտեղի աշխարհագրական բնույթի մասին կարող ենք խռովել<sup>7</sup> միայն րառի ընդարձակ և խորհրդանշական իմաստով: Հիրավի, մեզ հետարբրող տարածաշրջանի ֆիզիկական աշխարհագրությունը նիրկայացված է միայն մի քանի հիմնական նշումներով՝ կառպից ծովի անունով և Շամբոր ու Թարթառ գետերի ուրվագծով, որոնք թափվում են Կուրի մեջ: Վերջինս գծագրված չէ, սակայն հառնում է երեակայության մեջ, այնքանով, որ բանով, որ նրա մեջ է թափվում թարթառը: Փոխարենը՝ ոչ մի հիշատակություն չկա Աղվանքի նախկին տարածքի մի մասն ընդգրկող այս տարածաշրջանին բնորոշ լեռների մասին: Այս առթիվ, հետաքրքրական է նշել, որ քարտեղի վրա նշված են բազմաթիվ վայրեր, որոնք գտնվում են ՚ուր գետից հյուսիսից: Հավանաբար, անիմասս է ընդգծելը՝ այսօր առարկությունների տեղիք տվող այս տարածաշրջաններում XVII դ. հայերի իրեն «սովորական» ընկալվող ներկայությունը հավաստող վկայության կարերությունը: Հարկ է նաև նկատի ունենալ, որ XIX դ. վերջերին, կուրից այն կողմ, գեռեւս կային էջմիածնի եկեղեցու հոգածությանը վստահված հայ համայնքներ. անձամբ Մակար Բարիսուգարյանցն արդյո՞ք Շամասիի թևմի եղիսկուոցոս և նախքան այդ՝ Սալիմնի վանքի վանահայր չի եղել: Այս երկու տեղավայրերը, ինչպես նաև ամենահնագույն ժամանակներից ի վեր նշանավոր գարձած որոշ տեղանքներ, նշված են քարտեղի վրա: Այստեղ վերստին գտնում ենք այն վայրերը, որոնք սրբացվել են աղվանների առաջին ավետարանչի՝ Թագեսս առաքյալի աշակերտ Եղիշայի ներկայության ու նահատակության առիթով: Եղեմիա Զելեպին հիշատակում է նրա կյանքի որոշ իրադրծությունների մասին, որոնք արդարացնում են նրա պաշտամունքի երկարատեղությունը, նրա առաքելության, նահատակության, մասունքների տեղափոխության, այն մեծարանքների մասին, որոնք նրան արժանացրել է աստվածավախ քրիստոնյա թագավոր Վաչագանը, որը V դ. նրա կրած տառապանքների վայրում այսուն է խորացրել: Քննարկենք այս նշումներից մի քանիսը, որոնք մեզ ծառայում են նաև իրեն այն մեթոդի պարզաբանում, բայց որի կազմվել է ամբողջ քարտեղը.

Գիս Եղիշէի. նահատակութեան տեղի, որ Պում կոչի (թիվ 6):<sup>b</sup>

Դաշտակ Զարգանի. գուր Եղիշէի, ուր Վաջական թագաւոր սիւն կանգնեաց (թիվ 14):

Ճալէթ. Եղիշէ նախ աստ օրհնեաց. Եպիսկոպոսարան (թիվ 20):

Թրջեցի վանք Ուռեկան, ուր նախ Եղին զմարմին Եղիշէի առաքելոյ (թիվ 21):

Եպիսկոպոսարան: Եղիշէ առաքելոյ աթոռ, աջն գոյ (թիվ 50):

Վանք Եպիսկոպոսարան եւ գերեզման Եղիշէի. Զրվածիկ. նշխար Վաջական թագաւորի (թիվ 70):

7 Հիշենք Երեմիա Զելեպին «Աշխարհագրություն» անվամբ հայտնի երկը (Հայ եկեղեցու մասին), որը նրա կենսագիրների կողմից համարվել է կորսույան մատնված. Հենց գրամիջոցով է, որ սահմանում ենք քարտեղի բնույթը (G. U և հ օ ց ի ա ռ. Նշվ. աշխ., էջ 30):

8 Փակագծերում նշված համարը՝ «Հայաստանի հնադույն քարտեղը:...» գրքում զետեղված համապատասխան հոդվածի համարն է:

Երեմիա Զելեսլին հիշատակում է ոչ միայն տեղանք, վանք, ուխտատեղ, այլև հավելում է Հակիմը ծանոթագրություններ, որոնք կրանքի են կոչում ժամանակի խորքերում այդչափ հեռավոր աարածության վրա գանվող այս մանրամասները և երբեմն գրություններին ուղեցող գլխաղարկերով բազմապատկում ընթերցողի հետաքրքրությունը: Նարունակ ծագում է այն հարցը, թե ի՞նչ սկզբնաղբյուրներից է հեղինակը քաղել իր տեղեկությունները: Միանշանակ պատասխան գոյություն չունի: Այսաեղ նա հենքում է Մովսես Կաղանկատվացու պատումի վրա: Այդ նա է, որ պատմում է Եղիշայի քարոզության, յուրայինների դավաճանության, նահատակության և նրա ոսկորների սփռման, նրա մասունքների զարմանահրաշ հայտնաբերման և այն պաշտամունքի մասին, որի առարկան դրանք դարձել են<sup>9</sup>: Վերստին միևնույն Մովսեսի պատումն է սլարդարանում «Լեառն թաղուհին եւ բազումք նահատակեցան եւ քաղաքաբլուր կոչեցաւ» ծանոթագրությունից վեր տեղադրված աստղերի պատկերը (թիվ 73)<sup>10</sup>: Թաղուհին ազնվազարմ և բարեկաչտ քրիստոնյա էր, որը Սուրբ Հռիփսիմեի օրինակով մերժել է հոների թագավորի առաջարկությունները և հնթարկվել խոշտանգումների ու կնքել իր մահկանացուն: Հաջորդ գիշեր նահատակության վայրից մի հրաշագործ լույս է ժայթքել, կույսի բզկտված մնացորդները դարձել են փայլատակող, ինչպես աստղերը, և այս հրաշքը զմայլված դիտող մարդիկ այդ վայրը մկրտել են «Աստղաբլուր» անունով, որն օգտագործվում է առ այսօր: Պատմիչի պատումը եղրափակվում է այսպես տեղանունի սլատճառարանական լուծումով, որն այդուհանդեմ՝ տեղանքը «Քաղաքաբլուր» անվանող քարտեղի բնադրի համեմատությամբ իրենից տարընթերցվածք է ներկայացնում, թեսետ գծագիրն ակնհայտորեն հիշեցնում է Մովսես Կաղանկատվացու բնագիրը: Ինչպես տեսնում ենք, հեղինակի, նրա սկզբնաղբյուրների և այն ձեր միջև, որով նա դրանք ներկայացնում է, հաստատվում է նուրբ համաչափություն, որն ամեն անդամ խորն ուսումնասիրություն է պահանջում:

Ինչ վերաբերում է գրավոր սկզբնաղբյուրներին ընդհանրապես, առաջին դարերի մեծ պատմիչներից զատ, մենք պետք է հիշատակենք նաև Կիրակոս [Գանձակեցուն] (ինդրու առարկա կաթողիկոսության առթիվ տե՛ս Գանձասարի և Ամարաւու վանքերին վերաբերվող տեղեկությունները), Միհիթար Գոշին ու հատկապես Վարդան Արևելցուն և, ի գեսլ, պարականոն «Գործք առաքելոցը», ինչպես նաև «տնօրինականք» անվանվող գրվածքները, որոնք այդչափ տարածված են եղել Երեմիա Զելեպիի ժամանակաշրջանում (նա անձամբ ինքն էլ հեղինակել էր այդպիսիք) կամ բանավոր ավանդույթները, որոնք կյանքի էին կոչում այն ծանոթագրությունները, որոնցով լի է քարտեղը:

Այսպիսով, միշտ չէ, որ գյուղին է պարզաբանել, թե որտեղից են սկիզբ առնում տեղեկությունները: Հեղինակն այսաեղ ակնարկում է Վենետիկում գտնվող Միհիթարյան հայրերի գրադարանի ձեռագրերից մեկը. խոս-

<sup>9</sup> Մ ո գ ո է ո կ ա ղ ա ն կ ա ա ո ւ ա ց ի. Պատմութիւն աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, գ. 5 և 6:

<sup>10</sup> Նույն տեղում, գ. 29:

քը վերաբերում է նրա իսկ ձեռագրերից մեկի սևագրին<sup>11</sup>, որտեղ հաշվետվություն է տալիս քարտեղի սկարարասաման ընթացքում իր աշխատանքի մասին և պնդում, որ հիշատակված բաղմաթիվ մանրամասներին տեղեկացնել է ճանապարհորդների և ականատեսների օգնության շնորհիլ: Նա դանդապում է, այդուհանդերձ, վերջիններիս մեծ անիրազեկությունից, որը նրանց խանգարում էր զանազանել արեելքն արևմուտքից և հյուսիսը հարավից: Սակայն եթե նյութի մի մասը սկիզբ է առնում բանավոր ավանդույթից, ապա ակնհայտ է, որ մեծ մասամբ պատմության և Հայկական դասական մշակույթի իմացությունն է, որ նրան թույլատրիլ է իր առաջարարանքն ավարտին հասցնել այլչափ հաջողությամբ:

Ինչ-որ չափով օգտակար լինելու համար նրանց, ովքեր զբաղվում են բուն Արցախի տարածաշրջանի պատմությամբ, տալիս ենք կաթողիկոսության առարկայական հաստատությունների գասակարգումն ըստ հեղինակի օգտագործած տերմինարտնության, որը յուրաքանչյուր վայր լնորոշում է «քաղաք», «վանք», «անապատ» և «ուխտատեղ» տերմիններով: Յուրաքանչյուր անվանը կից բերում ենք քարտեղի վրա այդ անուններին սեղկցող ծանոթագրությունների:

Հարկ է «քաղաք» անվանումը կրող տեղանունների շարքը դասել նաև Շամախին, արև արժանացել է երեք թուղից բաղկացած տարբերակող նշանի, այն է՝ երեք նշանների, որոնք բնութագրում էին, ըստ հիշատակարանի բացատրության, բեյլերեյի կողմից կառավարվող քաղաքները<sup>12</sup>: Կուր գետից հարավ գտնվող քաղաքները հետևյալներն են.

Կէնծէ քաղաք. Խօսրօվ նահատակեցաւ (թիվ 12):

Պէրտէ քաղաք. գահ թագաւորին Վաշաղանի (թիվ 15):

Այստեղ կարելի է ավելացնել Փարիսոս քաղաքը (թիվ 23), թեև հիշատակություն կա միայն նրա վանքի մասին:

Դբրե «վանք» բնութագրվող վայրերը, որոնք ուղեկցվում են մեկնաբանություններով, հետևյալներն են.

Եպիսկոպոսարան. Սաղիանու վանք (թիվ 9):

Գոշ. Մլիթարագանք. Եպիսկոպոսարան եւ գերեզմանն (թիվ 10):

Գեակայ վանք. Եպիսկոպոսարան, ուր Վանական սնաւ (թիվ 11):

Եպիսկոպոսարան. Եւստաթէի եւ Խաթայ հետեւղացն առաքելոց վանք. ի տաշտէն (ՏԸԸ) մին խաշն ի տեղս է (թիվ 17):

Սուրբ Նշան վանք. Եպիսկոպոսարան (թիվ 19):

Եպիսկոպոսարան. Փառիսոս վանք (թիվ 23):

Եպիսկոպոսարան. Կիտասլակ վանք (թիվ 24):

Եպիսկոպոսարան. Խաթ առաքելոյ վանք, ոսորբ Աստուածածին (թիվ 28):

11 Հմմտ. Սուրբ Ղազարի (Վենետիկ) դրագարան, Ձեռագիլը 910, թ. 30 շրջ.-33 չթ:

12 Քարտեղի մասին շատ ավելի հիմնավոր պատկերագրում կազմելուն նպաստում են հիշատականի (թիվ 804) հետևյալ նշումները, որոնք վերաբերում են Գանձասարի կաթողիկոսությանը. «Եւ արդ ի խարդայս ցուցի. այն որ մին թուղով է, պարոնի քաղաք է գաւառան: Եւ որ երկու թուղով է փաշայ կոչի: Եւ որ երեք թուղով է պէկէրպէկի կոչի... Եւ զանապատսն ճգնաւորաց ձիթենեաց ոստովք ցուցի: Եւ զկուսանաղ անապատսն արմաւենեաց ոստովք ցուցի: ... Եւ դի գիտելի է Գանձասարայն ինքն Լուսաւորիչն զթուն իւր գիրիդորիս հաստատեաց Կաթողիկոս եւ կայ մինչեւ ցայսօր»:

Կաթուղիկե վանք (թիվ 30) (չճշ.<sup>13</sup>):  
 Հարապաղի Եղինասար. Եպիսկոպոսարան վանք (թիվ 33):  
 Եպիսկոպոսարան. Խորանաշատ վանք (թիվ 41):  
 Եպիսկոպոսարան. Խաչապէկ վանք (թիվ 47):  
 Եպիսկոպոսարան. Զարբերդ վանք (թիվ 51):  
 Եպիսկոպոսարան. Շախկախ վանք, ուր շղթայ Պետրոսի առաքելոյն  
 (թիվ 53):  
 Բթկաթաղենց վանք. Եպիսկոպոսարան (թիվ 59) (չճշ.):  
 Եպիսկոպոսարան. Կթեավանք. Լուսաւորիչ շինեաց (թիվ 61):  
 Վանք Տաշտանոց (թիվ 64) (չճշ.):  
 Եպիսկոպոսարան. սուրբ Յակոբայ վանք, ուր մասն կան Մծբնայ Յա-  
 կոր Հայրապեղին (թիվ 65):  
 Եպիսկոպոսարան. Հիբերայ վանք (թիվ 67):  
 Եպիսկոպոսարան. Տուղաղու Խաչափայտ վանք (թիվ 69) (ան. ճշ.):  
 Եպիսկոպոսարան. Շարայ վանք (թիվ 75):  
 Երևանի Ջելեպին գանազանում է սրբավայրերի ևս մեկ կարգ, որն ան-  
 վանում է «ուխտատեղ»:  
 Մեր Աւետարան, ուխտատեղ (թիվ 4):  
 Սուրբ Յովհաննէս ուխտատեղ (թիվ 18) (ան. ճշ.):  
 Գլիկոսրի սուրբ Խաչ. ուխտատեղ (թիվ 31) (չճշ.):  
 Ո մանկանց ուխտատեղ. մասունքն կան (թիվ 34):  
 Կաղնայ Խաչ. ուխտատեղ Փունդարի (թիվ 36):  
 Պլանուխ ուխտատեղ (թիվ 39) (չճշ.):  
 Տիրասուր վարդապետի գերեզման. ուխտատեղ (թիվ 46):  
 Ախնէ ուխտ Վարդապառի (թիվ 48):  
 Կան նաև իբրև «անապատ» բնութագրված մեծ թվով վայրեր, որոնք  
 հեղինակը նշում է արմավենու ճյուղով՝ եթե խոսքը վերաբերում է կույսե-  
 րի անապատի և ձիթենիով՝ եթե խոսքը վերաբերում է ճղնավորների անա-  
 պատի.  
 (ձիթենի) Անապատ Պանանց (թիվ 5):  
 (ձիթենի) Խօշկաշինու անապատ (թիվ 8):  
 (ձիթենի) Մաղկոց անապատ (թիվ 13):  
 (ձիթենի) Վերի Զէկէմ. Ղարամուրատ արանց անապատ (թիվ 22) (Ներ-  
 քին Զէկէմ, թիվ 43):  
 (արմավենի) Ոսկանապատ անապատ կուսանաց (թիվ 25):  
 (ձիթենի) Կտաշինու (Գետաշենու) անապատ (թիվ 26):  
 (արմավենի) Կուսանաց անապատ (թիվ 29) (ան. ճշ.):  
 (ձիթենի) Քեարխտնէ ուխտատեղ, անապատ (թիվ 32):  
 (ձիթենի) Զարեք անապատ. միանձունք և միաբանք, երբեմն եւս առա-  
 ւելուն (թիվ 35):  
 (ձիթենի) Արքայեկ անապատ (թիվ 37) (չճշ.):  
 (ձիթենի) Կիւլիստան. Ամենափրկիչ անապատ (թիվ 38):

<sup>13</sup> Հիշատակում ենք այն վայրերը, որոնք կամ անվան լայն տարածում գտած լինելու,  
 կամ այլ պատճառներով ի վիճակի չենք եղել ճշգրտելու։ Հասկապումները հետեւյալներն են  
 ճշ. (չճշգրտված), ան. ճշ. (անորոշ ճշգրտված):

(արմավենի) Քէմէնտար անապատ կուսանաց (թիվ 44) (չճշ.):

(արմավենի) Շնչերու, անապատ կուսանաց (թիվ 49):

(Ճիթենի) Անապատ արանց (թիվ 54) (չճշ.):

(Ճիթենի) Գոշի անապատ (թիվ 60) (ան. ճշ. - Դասնոյ անապատ?):

(Ճիթենի) Հագուռն անապատ (թիվ 62):

(Ճիթենի) Եղիշէի անապատ (թիվ 63) (ան. ճշ.):

(արմավենի) Կուսանաց անապատ (թիվ 66) (չճշ.):

(Ճիթենի) Անապատ Մեծչէն (թիվ 71):

(Ճիթենի) Անապատ Խաթայու (թիվ 74) (չճշ.):

(արմավենի) Կուսանաց անապատ Աւետարանոց (թիվ 79):

(Ճիթենի) Բըղըրդան անապատ (թիվ 80) (չճշ.):

Տվյալների ցուցակը համարելու համար հարկ է լիոներին կամ մեծ կարեռություն չունեցող տեղանքներին վերաբերող որոշ մեկնարանող դրություններ կցել, որոնց բնույթը տվյալ ժամանակաշրջանում ճշգրտելը խրթին է (գյուղ, աղբյուր, նահատակությունների համար հատկացված վայր և այլն) և որոնք մատնանշված չեն հատուկ անվանումներով.

Դաւիթ եւ Համաղատապ նահատակեցան (թիվ 16):

Հագարու իլան աղբիւր, արժանաւորաց ջուր երեւի. եւ անարժանից ցաք (թիվ 27):

Մուսքիւռ մերձ Տէմիր գափի (թիվ 40):

Միափերթ քարեայ եկեղեցի խցներովք (թիվ 42):

Դիզափայտ լեասն. Թաթարք զճգնաւորս եւ դհաւատացեալս խրցիւք գարւոյ եւ ցորենոյ այրեցին (թիվ 72):

Մարդաղաւնեաց խաչ. Թաթէոս բերաւ ի տաշտէն, ուր զՓրկիչն լուացին (թիվ 76):

Վէրէնաէ (թիվ 81):

Ախըստել (թիվ 105):

Վերջապես, կաթողիկոսական նստավայրին վերաբերող հիշատակությունց հետո հիշատակություն կա տարածաշրջանի ամենակարենոր վանքի Ամարասի մասին, որը ևս կրում է «կաթողիկոսական» տիտղոսը:

Աթոռ Գանձասար եւ կաթողիկոսարան սուրբ Խաչ անուն, գոյ ծնօտ Լուսաւորչին, զոր աներ Մագիստրոսի Ճիշանշիրայն բերել ետ. եւ մասն զլինոյ սուրբ Մկրտչին. եւ մասն իզապուղտոյ եւ Դաւթի Դվնեցոյ սրբոց վկայիցն (թիվ 78):

Եպիսկոպոսարան, Ամարաս. առաջին աթոռ Գրիգորիսի թուինն Լուսաւորչի: Եւ աստ յայտնեցան, ասեն, մեծի Վաշական թագաւորին շիշ մի լի արեամբ Զաքարեայ քահանային. եւ մասն Պանդաէիմօնի բժշկին եւ մասն Յովսէի Արեմտթացւոյն եւ Գրիգորիսի աջն եւ գերեզմանն աստ գոն (թիվ 77):

Ամարասու եայլա կաթողիկոսարանին (թիվ 68):

Ընդհանուր առմամբ, Գանձասարի կաթողիկոսությունը, երեմիա Զելեպիի ներկայացրած ձեռով, ընդգրկում է երեք քաղաք, որոնցից մեկը՝ Շամալսին, նշված է իբրև բեյլերբեյի քաղաք երեք թուղով: Այն ընդգրկում է նաև որոշ ավելի փոքր տեղավայրեր, ինչպես Վերենտեն ու Աղստել, որոշ լիոներ, որոնցում տեղի են ունեցել սարսափելի և հրաշագործ իրադար-

ձություններ (Դիղապայտ լեռն, օրինակ, կամ այն լեռը, որի վրա նահատակվել է երիտասարդ Թագուհին) և հատկապես սրբավայրեր. Գանձասարի կաթողիկոսության նստավայրն ու Ամարասի նշանավոր վանքը, ինչպես նաև դրանց ամսուային նստավայրը, 21 վանք, որոնցից հավանաբար միայն երկուսը (թիվ 30-ը՝ Կաթոլիկեն և թիվ 64-ը՝ Տաշտանոցը) չունեին եպիսկոպոս, 8 ուխտատեղ, ճգնավորների 16 անապատ, կույսերի՝ 6: Զարմանք է հարուցում անապատների քանակը, որոնց առկոսային հարաբերությունը շատ ավելի բարձր է, քան քարտեզի վրա ներկայացված այլ կաթողիկոսություններինը: Սա կարող է առիթ տալ վերստին խորհրդածելու կրոնասիրության և հավատասիրության այն մոդելի շուրջ, որը բնորոշ էր այս տարածաշրջանին այլոց համեմատությամբ:

Եղբավակելուց առաջ նշենք. այս բացառիկ փաստաթղթի յուրաքանչյուր տվյալ շահեկան է Համալրելու այն անեղր խճանկարը, որը բաղկացած է հայ եկեղեցու անհամար սրբավայրերից ե. որը մի հանգուցակետ է և տագնապահար եղած ու սփռված հայ ժողովրդին թույլարել է իր պատմության գերակշռող մասի ընթացքում պահպանել քրիստոնեական հավատն ու մշակութային ժառանգությունը և դարերի ընթացքում անաղարտ պահել իր ինքնությունը:

Քրանսերենից թարգմանեց  
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ